Թելից կախված երջանկություն

AGNÈS MARTIN-LUGAND

Entre mes mains, le bonheur se faufile

ROMAN

ԱՆՅԵՍ ՄԱՐՏԵՆ-ԼՅՈՒԳԱՆ

Թելից կախված երջանկություն

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Հասմիկ Առաքելյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.133.1-31 Մարտեն-Լյուգան
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Մ 390

Մ 390 Մարտեն-Լյուգան Անյես
Թելից կախված երջանկություն: Վեպ / Ա. Մարտեն-Լյուգան.- Եր.: Newmag, 2024.- 296 էջ:

Այս գիրքը մերօրյա Մոխրոտի պատմություն է: Ի տարբերություն հեքիաթային Մոխրոտի, Անյեսի հերոսուհին չի սպասում, որ բարի փերին փոխի իր ճակատագիրը:

Իրիսը դիզայների տաղանդ ունի, սակայն ծնողները ստիպել են այլ մասնագիտություն ընտրել: Ձանձրալի աշխատանք բանկում և անտարբեր ամուսին. սա նրա ամբողջ կյանքն է, որը միապաղաղ հոսում է գավառական քաղաքում: 31 տարեկանում Իրիսը որոշում է իրականացնել իր վաղեմի երազանքը, մեկնում է Փարիզ, որ բացահայտի նորաձևության աշխարհը և դառնա դիզայներ: Նա հայտնվում է տարօրինակ ստուդիայում, որը ղեկավարում է խորհրդավոր և ազդեցիկ գեղեցկուհի Մարթան: Իրադարձություններն անսպասելի ու հուզիչ ընթացք են ստանում:

Այս վեպն իր ինքնությունը փնտրող կնոջ դիմանկար է:

Ընթերցողը հերոսուհու հետ անցնում է դեպի երջանկություն տանող ինքնակայացման ճանապարհով, որից շեղվելն անհնար է:

ՀՏԴ 821.133.1-31 Մարտեն-Լյուգան
ԳՄԴ 84(4Ֆր)-44

ISBN 978-9939-967-56-1
© Éditions Michel Lafon 2014, Entre mes mains, le bonheur se faufile
Published by arrangement with Lester Literary Agency & Associates

Անյես Մարտեն-Լյուգան, «Թելից կախված երջանկություն» © 2024,
«Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Michel Lafon հրատարակչության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Գլուխ 1 11

Գլուխ 2 24

Գլուխ 3 46

Գլուխ 4 67

Գլուխ 5 90

Գլուխ 6 109

Գլուխ 7 139

Գլուխ 8 175

Գլուխ 9 203

Գլուխ 10 233

Գլուխ 11 267

Երախտագիտության խոսք 295

Նվիրում եմ Գիյոմին, Սիմոն-Ադերոյին,
Ռեմի-Տարիկուին. նրանք իմ կյանքն են:

Երջանկությունը հասուն տարիքում իրականացրած մանկության երազանքն է:

Զիգմունդ ՖՐՈՅԴ

Ամենագեղեցիկ զգեստը, որ կինը կարող է երբևէ կրել, սիրող տղամարդու գրկախառնությունն է:

Իվ ՍԵՆ ԼՈՐԱՆ

1

Բոլոր կիրակիների նման այդ օրը նույնպես չէի ցանկանում այնտեղ գնալ: Տնից դուրս գալու պահը ձգձգում էի, հնարավորին չափ ամեն ինչ անում էի, որ ժամանակ շահեի, բայց հանկարծ...

— Իրի՛ս,– բացականչեց Պիեռը,– ինչ եղար, դե, արի՛:

— Գալիս եմ, գալի՛ս:

— Արագացրո՛ւ, ուշանում ենք:

Տեսնես ինչո՞ւ էր ամուսինս ծնողներիս տանը ճաշելու համար իրեն այդքան կոտորում, մինչդեռ ես ամեն ինչ կտայի, որ չգնայի այնտեղ: Միակ օգուտս թերևս նոր զգեստս կրելն էր: Երեկ երեկոյան վերջին դետալներն էի ավելացրել, արդյունքն ինձ շատ էր գոհացրել: Ժամանակ առ ժամանակ նոր հագուստ ստեղծելով՝ փորձում էի կարուձև անելու ունակություններս չմոռանալ և պահպանել հմուտ դերձակի շնորհս, բայց միայն դա չէր պատճառը: Կարուձևի աշխարհում մոռանում էի ամեն ինչ՝ բանկում մահու չափ տաղտկալի աշխատանքս, միապաղաղ, անգույն առօրյաս ու թե ինչպես էր օր-օրի քայքայվում ընտանիքս: Մենք վաղուց դադարել էինք գոյություն ունենալ որպես ամուսնական զույգ: Կարի մեքենայիս մոտ շնչահեղձ լինելու զգացումս վերանում էր, աշխատելիս թևեր էի առնում: Երբ հագուստի նոր էսքիզներ էի անում, ներսումս ամեն ինչ արթնանում էր, կյանքը եռում էր իմ հոգում:

Դուրս գալուց առաջ վերջին անգամ հայելում ինձ նայեցի և հոգոց հանեցի:

Հասա Պիեռին. մուտքի մոտ ինձ էր սպասում: Հեռախոսով տարված խաղում էր: Մի պահ կանգ առա ու նրան զննեցի: Մոտավորապես տասը տարի է անցել մեր ծանոթությունից, բայց մինչև հիմա նրա կիրակնօրյա հանդերձանքը նշույլ անգամ չի փոխվել՝ իր երբեք չհնացող, հավերժական չարոխնեռով էր, հագին դասական վերնաշապիկ և կտորե տաբատ:

— Ահա և ես,– ասացի:

Այնպես վեր թռավ, ասես հանցանքի պահին էի բռնել: Հեռախոսն իսկույն դրեց գրպանը:

— Շուտ չեմ եկել,– մռթմռթալով հագավ բաճկոնը:

— Տես, սա երեկ եմ կարել: Հավանում ես:

— Շատ գեղեցիկ է, ինչպես միշտ:

Այդ խոսքերն ասելիս՝ արդեն դուռը բացել էր և գնում էր ավտոմեքենայի մոտ: Ինձ նույնիսկ աչքի պոչով չէր նայել. ինչպես միշտ:

Ուղիղ ժամը 12:30 մեր ավտոմեքենան կայանեցինք ծնողներիս տան դիմաց: Դուռը բացեց հայրս: Կենսաթոշակի անցնելը նրա վրա բացասական ազդեցություն էր թողել. աստիճանաբար գիրանում էր, կիրակնօրյա փողկապն արդեն խեղդում էր: Հայրս սեղմեց փեսայի ձեռքը, արագ ողջագուրվեց ինձ հետ և Պիեռին ուղեկցեց հյուրասենյակ, որ միասին խմեին ավանդական կարմիր պորտոն*: Նրանց հետևից մտա, բարևեցի երկու ավագ եղբայրներիս, որոնք արդեն

* Porto – գինու տեսակ (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

երկրորդ գավաթին էին հասել: Մեկը հենված էր բուխարուն, մյուսը բազմոցին նստած բարձրաձայն օրաթերթ էր կարդում, և միասին քննարկում էին քաղաքական լուրերը: Գնացի ու միացա խոհանոցի կանանց կլանին: Մայրս՝ գոգնոցը հագին, հսկում էր կրակին դրված գառան ազդրամիսը, որ չվառվեր, զուգահեռ կանաչ լոբու պահածոներն էր բացում. ուղիղ քառասուն տարի այս պատկերն ամեն կիրակի նույնն էր մեր տանը: Երկու հարսներս երեխաներին կերակրելով էին զբաղված: Ամենափոքրերը կուրծք էին ուտում, մեծերը՝ սեղանին դրվելիք տապակած կարտոֆիլից համտեսում: Զարմիկներս մի պահ իրենց ձեռքի հացը սեղանին դրեցին ու եկան իրենց հորաքրոջը համբույր տալու: Մորս օգնեցի. ջրից հանեցի հազարը, թեյի սրբիչով չորացրի ու վինեգրետ պատրաստեցի: Այդ ընթացքում լսում էի նրանց բամբասանքները տիկին այսինչի մասին, որ սկանդալ է սարքել դեղատանը, կամ պարոն այնինչի մասին, որի մոտ շագանակագեղձի քաղցկեղ էին հայտնաբերել: Մայրս լսած դեպքի առնչությամբ մեկնաբանություններ էր անում. «Նա պետք է ամաչի, որ իրեն այդպես է պահել: Չի կարելի այդպես» կամ «Ցավալի է, ախր նա դեռ այնքան երիտասարդ է...»: Ես լուռ էի, նման բամբասանքներն ինձ համար խորթ էին: Լռություն պահպանեցի նաև ընթրիքի ժամանակ: Ինչպես միշտ, սեղանի գլխին հայրս էր նստած: Ժամանակ առ ժամանակ հայացքս գցում էի Պիեռին. իմ հայրական տանը նա իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում, իսկ ես ձանձրանում էի. ինձ հոգեհարազատ ոչինչ չկար այնտեղ: Փոքր-ինչ մտացրվելու համար սեղանն էի դնում-հավաքում, ասես այդ տան փոքրը ես լինեի, բայց իրականում մեկ այլ պատճառ էլ կար. այդ սեղանի միակ զույգը, որ երեխա չուներ,

ես ու Պիեռն էինք: Պանրի ափսեն ձեռքիս խոհանոցից վերադառնալիս՝ հարսներիցս մեկը ասաց.

— Իրի՛ս, զգեստդ սքանչելի է: Որտեղի՞ց ես գնել:

Բարեհամբույր ժպտացի, Պիեռը վերջապես գլուխն իմ կողմ շրջեց:

— Իմ ձեղնահարկից է,– երեսը ծամածռեց:

— Զգեստս ինքս եմ ձևել ու կարել:

— Ա՛հ, ճիշտ է, մտքիցս ամբողջովին թռել էր, որ դու մի քիչ կարել գիտես:

Անհագ ցանկություն ունեի պատասխանելու, որ նա միակ մոռացկոտը չէ, բայց ինձ զսպեցի. այդ օրը որևէ սկանդալի տրամադրություն չունեի:

— Դու իսկապես գործի գիտակ ես: Ուղղակի ապշած եմ: Ինձ համար էլ այսպիսի նուրբ ու կանացի զգեստ կկարե՞ս:

— Եթե ցանկանում ես, հետո կխոսենք այդ մասին:

Նրբագեղ զգեստ կրելու նրա ցանկությունը հրաշքների շարքից էր: Հարսիս կերպարանափոխելն իսկական մարտահրավեր էր, որը հաջողությամբ իրականացնելը հաղթանակ կլիներ ինձ համար: Սովորաբար նա իր ավելորդ կիլոգրամները քողարկում էր թափվող տաբատների և թույլ բլուզների տակ:

Բոլորը լռեցին. սեղանի շուրջ մթնոլորտը սառեց: Նախընտրում էի գնալ-նստել տեղս և չշարունակել թեման: Ինձ համար ծանր էր խոսել փշրված երազանքիս մասին:

— Ափսոս, որ Իրիսը չուսանեց իր նախընտրած դպրոցում,– ասաց ավագ եղբայրս:

Այդ խոսքերը լսելուն պես գինու բաժակը դրեցի սեղանին՝ չհասցնելով կում անել: Գլուխս թեքեցի նրա կողմ. տեսքից

երևում էր, որ նույն պահին գիտակցել է, թե ինչ սխալ է դուրս տվել: Հետո շրջվեցի, նայեցի ծնողներիս. իրենց տեղը չէին գտնում անհարմարության զգացումից:

— Ինչ դպրոցից եք խոսում:

— Սխալ հասկացար, աղջի՛կս,– պատասխանեց մայրս,– պարզապես եղբայրդ ցանկանում էր ասել, որ այդ ոլորտում կարող էիր մեծ հաջողություններ ունենալ:

Քմծիծաղ տվեցի:

— Իրավացի եք, ԿԱՐՈՂ ԷԻ, մա՛մ: Դե, իհարկե, դուք ինձ «բավականաչափ» քաջալերել եք ժամանակին, ինչի համար մինչև կյանքիս վերջ երախտապարտ կլինեմ:

Մտովի տարիներ հետ գնացի, երբ մորս համար տոնական զգեստ էի կարել: Սիրտս ավելի քիչ կցավեր, եթե այդ ժամանակ ինձ ապտակած լիներ:

— Իրի՛ս, ի՞նչ է, ուզում ես, որ այս լաթի կտո՛րը կրեմ եղբորդ հարսանիքին: Ինչի՞ տեսք կունենամ,– այդ խոսքերն ինձ ասել էր ու զգեստն աթոռին շպրտել:

— Մա՛մ, գոնե փորձիր,– աղերսում էի,– վստահ եմ՝ դրա մեջ կփայլես: Ախր այնքան ժամանակ եմ ծախսել զգեստդ ստեղծելիս:

— Ավելի լավ կլիներ՝ անտեղի ժամանակ վատնելու փոխարեն քննություններիդ լավ պատրաստվեիր:

Եղբորս ձայնն ինձ իրականություն վերադարձրեց: Նա ուշադիր նայում էր ծնողներիս և կարծես գոհ էր, որ կրկին բորբոքել էր մեր տան՝ պատանեկությանս տարիների վեճերի հիմնական թեման:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark